# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԹՈՒՐ ՉԻԼԻՆԳԱՐՈՎԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ՉԻԼԻՆԳԱՐՈՎ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ շնորհաւորում ծննդեան 65-րդ տարեդարձի առիթով:

Այս պահին Մեր հոգում վերարթնանում են յուշերը Ձեզ հետ ունեցած մեր ջերմ հանդիպումների ու զրոյցների ինչպէս Մոսկուայում, այնպէս եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որոնց ընթացքում առիթ ենք ունեցել գոհունակութեամբ ճանաչելու Ձեր եկեղեցանուէր ու ազգասէր ոգին:

Ցարգարժան պարոն Չիլինգարով, ապրելով եւ գործելով Մայր Հայրենիքից դուրս՝ Դուք մեր ազգի նուիրեալ զաւակաց յատուկ նախանձախնդրութեամբ մշտապէս հարազատ էք մնացել ազգային մեր արժէքներին ու մեր նախնեաց աւանդներին՝ Ձեր ծնողների հոգածու դաստիարակութեան շնորհիւ Ձեր կրծքի տակ միշտ վառ պահելով հայրենասիրութեան եւ եկեղեցասիրութեան վեհ զգացումը:

Ձեր անունը քաջածանօթ է աշխարհում՝ իբրեւ նշանաւոր բեւեռախոյզ, գիտական ու քաղաքական յայտնի գործիչ: Տարիներ շարունակ պետական պատասխանատու պաշտօններ վարելով Ռուսաստանի Դաշնութիւնում՝ ծառայել էք արդիւնալից գործունէութիւն՝ ի խնդիր Ռուսաստանի զօրացման ու բարգաւաճման, նպաստելով նաեւ Ռուսաստանի եւ Հայաստանի բարի հարաբերութիւնների ամրապնդմանը եւ հաւատակից հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութեան առաւել սերտացմանը: Բազմամեայ հարուստ փորձառութեամբ Դուք այժմ էլ գովելի սպասաւորութիւն էք բերում Ռուսաստանի Դաշնութեանը՝ երկար տարիներ լինելով Պետական Դումայի փոխխօսնակը: Բարձր եւ պատասխանատու գործունէութեան հետ մէկտեղ Դուք՝ որպէս հարազատ եւ արժանաւոր զաւակը հայ ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, ստանձնել էք նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետի պաշտօնը՝ եռանդուն մասնակցութիւն ունենալով Ռուսահայոց թեմի եկեղեցական եւ ազգային կեանքում: Անմնացորդ նուիրումով ու ազնիւ պատրաստակամութեամբ աջակցելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի զօրացմանն ու բարգաւաճմանն ուղղուած համազգային ջանքերին՝ Դուք արժանացել էք հաւատաւոր մեր ժողովրդի անկեղծ սիրուն ու յարգանքին:

Ցարգարժան պարոն Չիլինգարով, Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Տիրոջ հանապազ օրհնութիւնը Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով քաջառողջ կեանքի արեւշատ տարիներ, գործոց յարաւորոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 24-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 260

Հայաստանի ազգային գրադարան
Ֆունդամենտալ գրադարան